„ՆՏ“ ՆԱՒՐԻՏ

Մ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

«ՆՏ» նաիրիտը սինթետիկ կաուչուկի՝ նաիրիտի տեսակներից մեկն է։ Այն ստացվել է Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանում՝ ըստ նոր, հատկապես մշակված տեխնոլոգիայի։

«ՆՏ» նաիրիտի լուծույթն ունի սոսնձելու լավ հատկություն։ Նա տալիս է ռետինի, կաշվի, թելքավոր նյութերի (կիրզա, տեքստիլ և այլն) սոսնձման բարձր ամրություն։ «ՆՏ» նաիրիտի սոսնձման ամրությունը միջին թվով հավասար է 12 կգ/սմ։

«ՆՏ» նաիրիտը զգալի չափով գերազանցում է կոշիկի արդյունաբերության մեջ կիրառվող արհեստական պերքլորվինիլային սոսնձից։ Ի տարբերություն վերջինի, «ՆՏ» նաիրիտի գործածման դեպքում վերանում է ներքանը ծծմբական թթվով մշակելու շրջանը, որը զգալի տնտեսում է տալիս։ Բացի դրանից, «ՆՏ» նաիրիտը գերազանց կերպով փոխարինում է դեֆիցիտային բնական գուտապերչից ստացվող սոսնձին և նրա արտադրությունը շատ անգամով էժան է նստում (գուտապերչից ստացվող սոսնձի մեկ տոննան արժե 95 հազար ռուբլի, մինչդեռ «ՆՏ» նաիրիտի տոննան արժե ընդամենը 7 հազար ռուբլի)։

Այս հատկությունների շնորհիվ, «ՆՏ» նաիրիտը մեծ կիրառում է գտնում կոշիկի արդյունաբերության մեջ։ «ՆՏ» նաիրիտի արտադրությունը մտցված է 1958 թվականի պլանի մեջ, բայց նրա պահանջը օրեցօր աճում է։

Ներկայումս Մոսկվայի, Լենինգրադի, Ռիգայի, Ռոստովի և Սովետական Միության այլ քաղաքների կոշիկի մի քանի տասնյակ ֆաբրիկաներ աշխատում են «ՆՏ» նաիրիտ նոր սինթետիկ նյութով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԿԱՀՈՒՅՔԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԻՐԵՐ

Ս. ՍԵԿՈՅԱՆ
Ինժեներ

Հաշվի առնելով բնակչության կողմից պահանջվող հարմար, գեղեցիկ և էժան կահույքը, մասնավորապես, մեկ և երկու սենյականոց փոքրիկ բնակարանների համար, Երևանի Ս. Մ. Կիրովի անվան կահույքի ֆաբրիկայում սկսել են արտադրել սեղանատան փոքր գարնիտուրներ, որոնք ֆաներապատված են թեղու և ընկուզենու արժեքավոր տեսակներով։ Գարնիտուրը բաղկացած է սերվանտից, ճաշի և սպասքի ձվաձև սեղաններից, կողասեղանիկից և 6 կամ 12 աթոռներից։

Այդ գարնիտուրի առաջին պարտիաները գրնորդների կողմից լավ գնահատականի են արժանացել, ուստի եկող տարում նման գարնիտուրներ զգալիորեն ավելի շատ կարտադրվեն, քան 1958 թվականին։

Հայաստանի կառավարության և ԺՈՂՈՎՈՐԴԻ որոշումներին համապատասխան, երեխաների համար կահույքի ասորտիմենտն ընդլայնելու նպատակով ԺՈՂՈՎՈՐԴԻ Փայտամշակման և անտառային արդյունաբերության վարչության ֆաբրիկաները 1958 թվականին կարտադրեն 12000 մանկական աթոռ, 4500 սեղան, 800 պահարան և 300 տնային նստարան։

Դրա հետ մեկտեղ, վարչության արտադրական-տեխնիկական բաժինը և կոնստրուկտորական բյուրոն մշակում են մանկական կահույքի նոր տեսակներ, մասնավորապես, մանկական փայտե մահճակալներ՝ ռետինե փոքր անիվներով և փոքր պահարաններ՝ մանկապարտեզների և մանկամատուրների համար։

1958 թվականից կահույքի ֆաբրիկաներում